## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

«Հայ ժողովրդական հեքիաթների» սույն հատորը, որն ընդգրկում է պատմական Հայաստանի Տուրուբերան նահանգի Հարք գավառի (Մուշ-Բուլանըխ) հեքիաթները, հրատարակության է պատրաստել Սողոմոն Տարոնցին, օգտագործելով իր հոր՝ ճանաչված բանահավաք-բանասեր Սահակ Մովսիսյանի (Բենսե) հավաքած անտիպ նյութերը:

Չսպասելով «Հայ ժողովրդական հեքիաթների» ներկա հրատարակության հաջորդ հերթական հատորների լույս ընծայմանը, բայց պահպանելով հեքիաթների՝ ըստ ազգագրական-աշխարհագրական շրջանների տեղաբաշխման սկզբունքը, հնագիտության և ազգագրության ինստիտուտը նպատակահարմար գտավ X հատորի տակ ներկայացնել արդեն տպագրության պատրաստ Մուշ-Բուլանըխի հեքիաթները: